քինախնդրութեան հոտած կրքով սկսումենք սուտ ու մուտ զրպարտութիւններ և բարուրանքներ հնարել և նոցա վերայ հրատարակել։ Հայերս չենք կարող հանդուրժել Հայ գլխաւորի, որի 99 կատարած բարի և ազգօգուտ գործերը կմոռանանք, և նրա մէկ փոշեսեսակ կամ ընդդէմ իր կամաց և սխալուած գործը հազար ու մէկ դարձուածներով կբմեկնենք և անզուսպ բերանով և անամօթութեամբ կհրատարակենք։

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆ։

ԱԶԴԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։

ՇՈՒՇՈՒՑ Պ. Ս. Տ. Դաւթեանցը մեզ գրումէ. «Սեպտեմբերի 25ին երեկոյեան ժամին փառաւոր հանդիսով կատարուեցաւ Վեհափառ Հայրապետի տօնը։ Նշանակեալ ժամին տեղւոյս երկսեռ ուսումնարանաց աշակերտները և աշակերտուհիները խուռն բազմութեամբ դիմեցին Ագուլեաց աւագ եկեղեցին, ուր սպասումէ էին եկեղեցւոյ պաշտօնեաները և արժանապատիւ հայր Կարապետ Վ. Այվազեանը։ Երեկոյեան ժամերգութիւնը կատարելուց յետոյ հանդէսը սկիզբն առաւ ճառով, որը կարդաց տղայոց ուսումնարանի կողմից մի աշակերտ, ուր համառօտ կերպով ամփոփուած էր Կաթուղիկոսի գործերը։ Ճառը վերջանալուց յետոյ ուսումնարանի տղայքը միաբերան երգեցին «Հնչեսցեն լարք» ազգային երգը։ Առաջին երգից յետոյ համօրէն աշակերտուհիների կողմից մի օրիորդ կարդաց ճառ, որոյ բովանդակութիւնն էր հոգևորական դասի նշանակութիւնը Հայոց մէջ, Վեհափառ Կաթուղիկոսի արժանաւոր գործունէութիւնները ներկայ դարուս մէջ և վերջը մի խորհրդածութիւն դէպի ուսումնարանի օրիորդները։ Անմիջապէս օրիորդաց ճառին հետևեց «Ով տէր Աստուած» երգը, որը երգեցին քաղցր և ներդաշնակ կերպով նոյն իսկ օրիորդները։ Հայր կարապետ Վ. Այվազեանը հանդիսին վերջ տուաւ մի ազդու և իմաստալից ճառով։ Յորում մի առ մի մէջ բերեց Վեհափառ կաթուղիկոսի անթիւ անհամար բարեգործութիւնները։ Նորա բարի ձգտումները և ազգային լուսաւորութեան վերայ ունեցած ճիգը։ Հայր Այվազեանի ճառախօսութիւնը մեծ տպաւորութիւններ արաւ բոլորի վերայ և առհասարակ ամենքը ևս յուզուած՝ դուրս գնացին եկեղեցուց անջնջելի կերպով դրոշմելով իրենց սրտերի մէջ մեր մեծ Հայրապետի անունը։ . . .

. . . . . .

Այս քանի ժամանակներումս մեռան մի քանի անձինք, որոնք նուիրեցին ուսումնարանին բաւական մեծ գումար շնորհիւ Արժ. Այվազեանի։

***

Նոր—Նախիջևանցի Մեծ. Պ. Ստեփան Խաչնազարեան և նորա բարեպաշտուհի ամուսին Տիկին Հռիփսիմէ Ցարութիւնեան Խալիպեանց ցանկալով Ս. Սիոնին մէջ յիշատակի յաւիտենական երանութիւնը ժառանգել, ըստ այնմ թէ՝ «երանի՜, որ ունիցի յիշատակ ի Սիոն», իւրեանց աստուածասիրական և ազգասիրական գովելի զգացմունքից դրդեալ նուիրեցին մի ձեռք տուն իւր կից շինութիւններով Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի ի սեփհականութիւն, որոյ տարեկան եկամուտը հասնումէ 180—200 ռբ. մի նոյնպիսի տուն ևս նուիրեցին Նոր—Նախիջևանի Ս. Խաչի վանուց, որոյ տարեկան վարձը հասնումէ 160—180 ռուբլի։ Այս երկու տներն շինուած են յիշեալ Ս. Խաչ վանուց մերձակայ եղող հայաբնակ Ազարակ (хуторъ) անուանեալ գեղում։ Սորա զետեղուած են 33 սաժէն (իբր 99 կանգուն) երկայնութիւն և 28 սաժէն (իբր 84 կանգուն) լայնութիւն ունեցող տարածութեամբ գետնոյ վերայ։ Նոյնպիսի մի տուն ևս կից նոյն տների արդէն ձեռնարկած են յիշեալ բարեպաշտ Ամուսինքը կառուցանել՝ դարձեալ նոյն վանուց նուիրելու համար։

Բացի սորանից յիշեալ բարեպաշտ նուիրատուքը ցանկութիւն են յայտնել Նորին Վեհափառութեան, որ իւրեանց մահից յետոյ իւրեանց ամենատեսակ շարժական գոյքն ու ստացուածքը թողուլ ի սեպհականութիւն և ի տնօրէնութիւն Հայկ. Եկեղեցւոյ Ծայրագոյն Հոգևոր Վարչութեան։ Սոյն բարեպաշտ Ամուսինների նպաստն ու օժանդակու-թիւնը շատ անգամ է հասած Ս. Խաչ վանուցը։ Նմանապէս սոքա իւրեանց սեպհականութիւնից կառուցին Չալթր գիւղի մէջ մի բաւական յարմարաւոր և մեծածախ շինութիւն և նուիրեցին նոյն գիւղի եկեղեցւոյն ծխական դպրոցի համար, որի համար և ստացած են Վեհ. Հայրապետից օրհնութեան կոնդակ դեռ 1875 թուականին։

Ազգիս Վեհափառ Հայրապետ սիրալիր հաճութեամբ ընդունելով յիշեալ բարեպաշտից ուխտը և նուէրները Հոգևոր Վարչութեան իրաւասութեան ներքոյ՝ օրհնեց նոցա իւր սրբատառ Հայրապետական Կոնդակաւ և նոցա խնդրանաց համեմատ բարեհաճեց թոյլատրել, որ յիշեալ նուիրատուաց մարմինքը իւրեանց մահից յետոյ ամփոփուին Ս. Խաչի վանուց սրահի մէջ առընթեր Եկեղեցւոյ և օրինադրեց որ, նոյն վանուց վանահայրը իւրաքանչիւր տարի անխափան Վարդավառի երկրորդ օրը պարտաւորեալ լինի օրհնել նոցա գերեզմանները։

Նպատակը և գործը ինքնին ցուցանելով այս բարեպաշտ Ամուսինների աստուածահաճոյ ուխտի նուիրանաց ո՛րքան և որպիսի՛ գովեստից արժանի լինելը, հրապարակաւ շնորհակալութիւն կյայտնեմք նոցա և կցանկամք, որ մեր բարեպաշտ Ազգայինք հետևին նոցա այսպիսի բարեպաշտական և ազգօգուտ օրինակին և վսեմ նպատակին։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի Վ.ԱՂԱՐՇԱՊԱՏ: